I

ՀԱՅԱՍՏԱՆ- ՍՓՅՈՒՌՔ: ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՓՈՒԼ

Բանասիր. գիտ. դոկտոր ԿԱՐԼԵՆ ԴԱՎԼԱՔՅԱՆ

Այսօր ամբողջ հայությունը Հայաստան—Սփյուռք հարաբերությունների նոր զարգացումներ է ակնկալում։ Քաղաքական բոլոր հոսանքները ու խմբավորումները անհրաժեշտ են գտնում համապատասխան հարցադրումներ անել իրենց ծրագրային փաստաթղթերում, ստեղծվում են նույնիսկ Հայաստան—Սփյուռք միասնությունը հետապնդող կազմակերպություններ։ Իշխանություններն էլ համահայկական ժողովներ ու խորհրդակցություններ են հրավիրում, նավասարդյան խաղեր կազմակերպում։ Հարցը, իրոք, հասունացել է ու ծառացել հայության առջև իբրև մեր օրերի մարտահրավեր։ Խնդիրը սակայն, բաց տարածության մեջ, զերոյից չի սկսվում։ Հարցն ունեցել է իր որոշակի պատմությունը և անհրաժեշտ է, որպեսզի դրան նոր զարգացումներ հաղորդելու հավակնող ուժերն ու հեղինակները հաշվի նստեն Հայաստան—Սփյուռք հարաբերությունների եղելության հետ՝ առնվազն կրկնած չլինելու համար նախորդած սխալներն ու վրիպումները։

* * *

Հայաստան—Սփյուռք հարաբերությունները վերապրել են մի քանի պատմական ժամանակահատվածներ, որոնց համար ընդհանուրը Հայրենիքի հետ Սփյուռքի կապերի քայլ առ քայլ ընդլայնելու միտումն էր։ Առաջին հանգրվաններում այդ կապերը նույնիսկ առհասարակ սեղմվել, սառեցվել կամ խզվել են, բայց տարածքի ու ժամանակի մեջ միտումը մնացել է գործող։

Առաջին հանրապետությունը, իր կարճատև կյանքի բերումով, լուրջ հարաբերություններ չհաստատեց Սփյուռքի հետ։ Հարաբերությունների հիմնական բաժինը ընկնում է խորհրդային Հայաստանի ժամանակաշրջանին, որի ընթացքում դեպի Սփյուռք արտածվող քաղաքականության սկզբունքների կորագիծը տատանվում է՝ ազգայինից դեպի դասակարգային և նորից ետ՝ դեպի ազգային։

Քսանական թվականների սկզբներին ստեղծվեց Հայաստանի Օգնության Կոմիտեն (ՀՕԿ), որի առաջին նախագահ, մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, 1921 թ. հոկտեմբերի 1-ին Պոլսում, Հայրենիքի Օգնության Մարմնի կենտրոնական վարչության ատենապետ Վ. Ալթունյանի հետ մի փաստաթուղթ է ստորագրում։ Նրա մեջ ասված է. «Ինչքան ալ գաղափարական ըլլա պայքարը, զոր զանազան կուսակցություններ, նույնիսկ հանուն Հայաստանի բարօրության, հանուն հայ ժողովրդի երջանկության, այնքան մոլեգնորեն կը մղեն իրարու դեմ, պետք է դադարի այդ պայքարը հոն, ուր մեծ օրակարգ կը սկսի՝ Հայաստան և Հայ ժողովուրդ։ Մենք հոս և Հայաստանի մեջ հաստատած ենք ներդաշնակ համագործակցության կարելիությունը, կարգը արտասահմանինն է»։

Այս փաստաթուղթը, փաստորեն համազգային համերաշխության ոգու արտահայտությունն էր։ Եվ հենց դրա վրա, այսինքն ազգային սկզբունքի հիման վրա արվեցին Հայաստան—Սփյուռք հարաբերությունների առաջին քայլերը։ Բայց, շատ կարճատև ժամանակի համար։

Արդեն մի քանի տարի հետո, այսինքն՝ 20-ականների կեսերից պաշտոնապես դրվեց սփյուռքահայության դասակարգային շերտավորման պահանջը։ 1923-ին, Լոզանի կոնֆերանսում մեր ազգային ակնկալիքների պատրանքաթափումից հետո, գաղթահայության բոլոր զանգվածները իրապաշտ ըմբռնումով իրենց հայացքը դարձրել էին դեպի Խորհրդային Հայաստանը՝ որպես հայության գոյատևության և զարգացման միակ խարսխի։ Դա ազգային սկզբունքի վրա բազմապիսի կապերի հաստատման հնարավորության մի եզակի պահ էր։ Բայց պաշտոնական քաղաքականությունը կառուցվել սկսեց դասակարգային շերտավորման սկզբունքի վրա։ Հայաստանի հետ գործակցության ծիրից օտարվեցին բոլորը, աշխատավորական կոչվող խավերից զատ։ Կիրառվում էր «ով մեզ հետ չէ՝ մեր դեմ է» տարամերժ կարգախոսը։

Այս քաղաքականության իրականացման հիմնական խողովակ ընտրվեց ՀՕԿ-ը, որի մասնաճյուղերը արտասահմանում, փաստորեն, վերածվեցին համապատասխան քարոզչության կենտրոնների։ Խորհրդային Հայաստանի ղեկավար գործիչներից մեկը այդ օրերին խնդիր էր դնում, թե ՀՕԿ-ը պիտի դադարի լինել ազգի «կենդանի ուժերի», ազգային դասակարգերի ու կուսակցությունների կոնսոլիդացիայի ասպարեզ։ Նա պետք է դառնա աշխատավորական լայն մասսաների կազմակերպման մի օրգան, որը, վերջ տալով ներհակ դասակարգերի համագործակցության սին մտայնությանը, նպաստելու է ազգության դասակարգային շերտավորմանը։ Անշուշտ, այս ամենը ոչ մի առնչություն չուներ ՀՕԿ-ի՝ Հայաստանին օգնություն կազմակերպելու առաքելության հետ։

ՀՕԿ-ի գնահատականը միանշանակ չէ։ Այդ կազմակերպությունը խոշոր դրական արդյունք ունեցավ թե՛ նյութական օգնություն, թե՛ հայրենադարձություն կազմակերպելու և թե՛ Խորհրդային Հայաստանի մասին ճշմարիտ լրատվություն տարածելու գործում։ Միաժամանակ, ակնհայտ էր, որ ՀՕԿ-ը սկսեց ծառայել իբրև քաղաքական քարոզչության խողովակ, դրանով իսկ խիստ սահմանափակելով իր առաքելությունը, իրենից օտարելով հայ զանգվածներին։

Նման կարգի գործունեությունը, որը նպատակ ուներ գասակարգայնորեն սահմանազատվել Սփյուռքի ոչ-աշխատավորական խավերից, առարկայականորեն հանգեցրեց պատնեշի կառուցմանը Հայաստանի և Սփյուռքի միջև։ Այդ առթիվ, պատմաբան Արշակ Ալպոյաջյանը ցավով նկատել է, թե Լոզանի ձախողանքից հետո սփյուռքահայությունը հայ ազգի գոյատևության միակ կրողանը տեսել է միայն Խորհրդային Հայաստանի գոյության և զարգացման հնարավորության մեջ, իսկ Հայաստանի ղեկավարները, դժբախտաբար, բավականաչափ հասունություն չունեցան այդ բացառիկ հոգեբանական պահից օգտվելու կա՛մ առաջադրված սխալ տեսություններից, կա՛մ բոլորովին կամքից անկախ պատճառներով՝ ամրացնելու համար Խորհրդային Հայաստանի դիրքը եթե ոչ իբր քաղաքական հովանավորող ուժը Հայաստանի անձուկ սահմաններից դուրս գտնվող հայոց, այլ գեթ իբր նրանց բարոյական առաջնորդը, և Երևանը դարձնել ընդհանուր միության կենտրոն։

* * *

Երկրորդ փուլը կամ հանգրվանը սկսվում է վաթսունական թվականների սկզբներին, երբ դասակարգային շերտավորման սկզբունքին փոխարինելու եկավ քաղաքական շերտավորումը, այսինքն՝ Սփյուռք արտածվող քաղաքականության մեջ Հայաստանը շեշտը սկսեց դնել քաղաքականապես ոչ-հակառակորդ ուժերի հետ գործակցության հնարավորության վրա։ Դրանով իսկ Հայաստանի դռները լայնորեն բացվեցին բոլոր նրանց առջև, ովքեր պատրաստակամություն էին հայտնում նման գործակցության համար։ Բացառություն մնաց միայն պաշտոնական՝ Դաշնակցությունը, քանի որ այդ կուսակ-

ցության շատ անդամներ՝ անհատապես և նրա հովանու տակ գործող միավորներ հնարավորություն ստացան այս կամ այն չափով մասնակցելու Հայաստան—Սփյուռք բուռն զարգացող հարաբերություններին։

Հայաստանում ստեղծվեց մի նոր մարմին՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն, որը ձևով հասարակական (ոչ-կառավարական) կազմակերպություն էր, բայց իր էությամբ պետության նոր քաղաքականությունը իրականացնելու կոչված կառույց՝ հենց պետության կողմից ֆինանսավորվող։

Հենց այդ կառույցն էլ իր ուսերին վերցրեց նոր փուլի կենսագործման առաքելությունը, և ի տարբերություն ՀՕԿ-ի, անընդհատ ընդլայնեց իր գործունեության սահմանները։ Այս նոր փուլի համար բնութագրական էր, որ ազգային սկզբունքը աստիճանաբար վերանվաճում էր հիմնական ու վճռական դիրքը Հայաստան—Սփյուռք հարաբերություններում։

Վաթսունական թվականներից ծայր առնող գրեթե քառորդ դարը՝ մինչև ութսունականների վերջը, Հայաստան—Սփյուռք հարաբերությունների ամենաբուռն զարգացման շրջանը եղավ։ Վերազարթոնք ապրեց Հայ Դատը, Սփյուռքը ստացավ աննախընթաց մշակութային սատար մայր հայրենիքից։ Դրանք այն տարիներն էին, որոնք ազգային հպարտության խոր զգացում պատճառեցին սփյուռքահայ մարդուն՝ Հայրենիքի գիտական, մշակութային, կրթական, շինարարական, առհասարակ հասարակական կյանքի շատ մարզերում ձեռք բերված բարձր արդյունքների համար։ Հայրենիք այցելելը, Հայրենիքի հետ կապվելը, հայրենի ժողովրդի հետ շփվելը դարձել էր ներքին պահանջ, սրբազան ուխտագնացության նման անհրաժեշտություն։

* * *

Հայաստանի անկախության հռչակումով նոր փուլ սկսվեց Հայրենիքի և Սփյուռքի հարաբերությունների մեջ։ Տեսականորեն՝ վերացվել էին բոլոր կարգի սահմանափակումներն ու խոչընդոտները։ Ստեղծվել էին անհրաժեշտ քաղաքական հնարավորություններ «Մեկ ազգ՝ մեկ հայրենիք» կարգախոսի մարմնավորման համար, այսինքն՝ սկսվում էր մի նոր փուլ, որը պիտի հանդեր Հայաստան—Սփյուռք ինտեգրացիային՝ կենսագործունեության շատ բնագավառներում։ Գործնականում, սակայն, քաղաքականությունը այլ ընթացք ունեցավ։

Ասես վերականգնվեցին դասակարգային շերտավորման շրջանի մոտեցումները և մեթոդները։ Հայաստանի իշխանությունները նախ փորձեցին «վերակառուցել» Սփյուռքը, գոյություն ունեցող կազմակերպությունների ղեկավար տարրը փոփոխելու և նոր մարդկանցով, իմա՝ սեփական ցուցամատին հլու-հնազանդ «երիտասարդներով» համալրելու այդ կառույցների ղեկավարությունը։ Երբ նման փորձը ձախողվեց, վիճակից իբրև ելք՝ Կալիֆորնիայում նույնիսկ ստեղծվեց ՀՀՇ կուսակցություն։ Երվանդ Օտյանի գրչին արժանի այս արկածն էլ անցավ անհետևանք։ Մնաց խորհրդային շրջանի քսանական թվականների փորձառության զինանոցից փոխառնված ամենազորեղ միջոցը գործադրել՝ ՀՀ Դաշնակցությունը ամբողջովին օտարել Հայաստանից։ Սկսվեցին դատական հետապնդումներ ու հալածանքներ։ Հայաստանի իշխանությունները պարզապես իրենց ապահովագրում էին, որպեսզի ՀՀԴ-ն ինչպես նաև որևէ ուրիշ ուժ, փորձ իսկ չաներ խախտելու իշխանության նկատմամբ ՀՀՇ-ի մենաշնորհը։ Նշեմ նաև, որ այս ամենի հետ անմիջական կապ ուներ իշխանության՝ ցավագարության հասնող վճռականությունը վարկաբեկելու և, ապա, վերացնելու Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն։ Այսինքն՝ կտրեցին այն ճյուղը, որի վրա նստած էին Սփյուռքի հետ բնականոն հարաբերություններ իրականացնելու համար։ Կոմիտեն, ըստ երևույթին, կարող էր խոչընդոտել Սփյուռքի նկատմամբ որդեգրված նոր մարտավարության իրականացմանը։ Դրա համար էլ նախապես վերացվեց։

Այս մարտավարությունը Սփյուռքում արձագանքվեց քաղաքական պառակտման աննախադեպ սրումով։ Թերևս երբեք կրքերը այդ աստիճան շիկացած չէին, ինչպես ինքնամեկուսացման թվականների կեսերին։ Մի կողմում արհեստականորեն սերմանվում էր «աղգընտիր» նախագահի պաշտամունք, մյուսում՝ փոթորիկ, հակառակ հասցեով։

Պայքարին հավելյալ վառելանյութ էր մատուցում Հայաստանից հնչող հրահանգը այն մասին, թե Սփյուռքը թող փող տա, իսկ այդ փողի կոնկրետ օգտագործման հարցը իրեն չի վերաբերում, թող չխառնվի երկրի ներքին գործերին։ Ճիշտ հենց այդպիսի խոսքերով Հայաստանի նախարարներից մեկը Փարիզի հայ համայնքում հանդես եկավ, որպեսզի եկեղեցուն կից ստեղծված հանձնախումբը 11 միլիոն ֆրանկը հանձներ Հայաստանի դեսպանությանը, իսկ թե ինչպես կծախսվեր այդ գումարը, հանձնախմբի գործը չէր։ Սփյուռքով մեկ տարածվել սկսեց մի առակ, ըստ որի Հայաստանի իշխանությունը Սփյուռքը դիտում էր որպես անգիտակից կթու կով։ Մեր «ներքին գործերին չխառնվելու» թեզը ավելի ևս թանձրացրեց վիճակը, երբ Հայաստանի ղեկավարությունը որոշեց բուժել հայ ժողովրդի հոգեբանությունը, ջնջելով նրա հիշողության գրատախտակը, մոռացության տալով Հայ Դատն ու ցեղասպանությունը, հերքելով ազգային գաղափարախոսությունը և այլն։ Սփյուռքում շատերը ըմբռնեցին, որ այդ ամենը այլևս «ներքին գործ» չէ, վերաբերում է ամբողջ ժողովրդին, բայց նույն ժողովրդի կեսից ավելին մնում էր լուսանցքում, հարցերի քննարկմանը ու լուծմանը անմասնակից։ Մեր ժողովրդին «բուժելու» ՀՀՇ-ական այդ դեղատոմսը առաջացրեց շատերի, այդ թվում ԱՍԱԼԱ-ի դժգոհությունը։

Այսպիսով, նոր փուլի սկզբնավորման շրջանում ձախողվեց «Մեկ ազգ՝ մեկ հայրենիք» կարգախոսի իրականացումը։ Այս օրերին էլ կատարվում են նոր փորձեր, որոնց նպատակն է որոնել, գտնել Հայրենիք—Սփյուռք ինտեգրացիայի ուղիները։ Ստորև պիտի շարադրեմ ինձանի իմ պատկերացումները մի քանի կետով։

1. Հայրենիք—Սփյուռք ինտեգրացիայի նախապայման է բուն Սփյուռքի միասնության ապահովումը, որը պիտի արտահայտվի թե՛ առանձին գաղթօջախներում, թե՛ մանավանդ, համասփյուռքյան միասնական դեկավար մարմինների ստեղծմամբ։

Սփյուռքի գոյատևման ամբողջ ընթացքում այդ հարցը միշտ ծառացել է, բայց երբեք չի լուծվել։ Քսանակսան-երեսնական թվականներին բազմաթիվ բանակցություններ են ընթացել Ռամկավար Ազատական և Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունների միջև, որոնք բոլորը ավարտվել են ապարդյուն։

Նման միասնություն հնարավոր չէր նաև հիմնական մի պատճառով։ Խորհրդային Հայաստանի իշխանությունները կտրականապես դեմ էին, քանի որ հնարավոր միասնական մարմնում, բնականաբար, հրամայող դիրքեր պիտի գրավեին ՀՀԴ-ն և մյուս ազգային կուսակցությունները։ Այդ առթիվ հստակ ու բացահայտ արտահայտվեց Հակոմկուսի առաջին քարտուղար Աղասի Խանջյանը 1931 թվականի աշնանը մի հրապարակային ճառում։ Հիսունական թվականների կեսերից ի վեր Հայաստանյաց Առաքելական եկեղեցուց ներս տեղ գտած տագնապը, որը մինչև օրս, ցավոք, շարունակվում է, առհասարակ գործնականում վերացրեց Սփյուռքում միասնական մարմինների ստեղծման հնարավորությունը։ Այդ պահից ի վեր Հայաստանյաց եկեղեցին գործնականում հանդես է գալիս երկու «հավասարազոր» գլուխներով։ Սփյուռքի բոլոր գաղթօջախներում, որտեղ գործում են Էջմիածնի և Անթիլիասի թեմերը, «երկգլխանիությունը» առկա է, մեծ ավերածություններ կատարելով հարգանք հոգեբանության մեջ։ Եկեղեցին ոչ մի կերպ չի կարողանում միասնական կանոնադրություն ունենալ։ Դրությունը թվում է անհուսալի։ Նույնիսկ հենց վերջերս հրաժարական տվեց ԱՄՆ-ի Արևելյան թեմի հանձնաժողովը,

որը բաղում տարիներ ապարդյուն փորձում էր միասնության եզրեր գտնել նույն տարածքում գործող անթիլիասական թեմի հետ։

Ակնհայտ է, որ Սփյուռքում միասնության հնարավորությունը այսօր ուղղակիորեն կապված է Հայաստանյաց եկեղեցու միասնությունից։ Խնդիրը գրականապես լուծելու ուրվանկարներ երևում են։ ՀՀԴ-ն այսօր գործակցում է Հայաստանի իշխանությունների հետ, ուրեմն և շահագրգռված պիտի լինի եկեղեցուց ներս բույն դրած տագնապի վերացման հարցում։ Կասկած չունեմ, որ Հայաստանյաց եկեղեցու միասնության վերականգնումը կախված է ՀՀԴ-ի հավաքական կամքից։

2. Հայաստան—Սփյուռք հարաբերությունները պետք է կառուցվեն հորիզոնական հարթության վրա։ Անհրաժեշտ է բացառել ուղղաձիգ միտումները, որոնց հետևանքով պետությունը, կամ նրա կամքն արտահայտող տարբեր օղակները (կառավարություն, նախարարություններ և այլն) փորձում են վարչահրամայական ուժ կիրառել։ Եթե լրջորեն վերլուծելու լինենք «Հայաստան» հիմնադրամի մասնակի ձախողման պատճառները, ապա ան-խուսափելիորեն պիտի վեր հանենք այդ ուղղաձիգ ուժի կիրառման երևույթը։

Այսօր էլ պետությունը չի հրաժարվել ուղղաձիգ կառույցից, քանի որ հրավիրված բազմաթիվ խորհրդակցություններում և ժողովներում հրամայող դերակատարություն է հանձնվում կառավարությանը, նրա առանձին անդամներին։

Պետք է անհապաղ ստեղծել Սփյուռքի հետ հարաբերությունները իրականացնող մի մարմին, որն ունենա ոչ-կառավարական կարգավիճակ, բայց կոչված լինի իրագործելու պետության ու կառավարության ծրագրերը, և հենց այդ մարմնին տրամադրել որոշակի մենաշնորհ պետության տարբեր օղակների հարաբերությունները Սփյուռքի հետ կանոնակարգելու հարցում։

Հենց այդ մարմնի մասնակցությամբ պետք է ամենայն ուշադրությամբ մշակվեն Հայաստան—Սփյուռք ինտեգրացիային վերաբերող բոլոր հարցերը՝ անտեսական, քաղաքական, մշակութային և այլն։

3. Հարաբերությունների հիմնահարցը տնտեսական ինտեգրացիայի խնդիրն է։ Թեպետ արդեն գրեթե մեկ տասնամյակի փաստական անկախության երկիր է Հայաստանը, բայց սփյուռքահայ դրամագլխի ներդրումներ մեր տնտեսության մեջ աննկատելի են։ Հիմնական պատճառը ներդրվող միջոցների անպաշտպանվածությունն է։ Նույնիսկ պետությունը մի պահ կազմակերպեց բացահայտ ռեկետ՝ էլ չխոսելով արդեն մասնավոր ռեկետի ամենօրյա գործառույթի մասին։ Հիշողությանս մեջ դեռ թարմ է ամերիկահայ բիզնեսմեն Ռուբեն Թերզյանի հուսահատ փախուստը Հայաստանից, երբ նրա «Արմենթոյ» ձեռնարկության տապալումը խժռեց մեկ միլիոնից ավելի դոլար դումար՝ տարբեր մակարդակի ու զորության տեր «հարկահավաքների» միջամտության շնորհիվ։

Պետության կողմից սփյուռքահայոց ներդրումները խրախուսող օրենքների ընդունումը և դրանց պաշտպանվածության բացարձակ ապահովումը, որը մեր պետության առաջնահերթ պարտականությունն է, դեռևս չի կարող հիմք հանդիսանալ տնտեսական ինտեգրացիայի լիակատար իրականացման համար։ Նման արդյունքի կարելի է հասնել սփյուռքահայության ամենօրյա մասնակցությամբ մեր տնտեսական կենսագործունեության բոլոր բնագավառներում։ Իսկ դա իր հերթին ենթադրում է սփյուռքահայ մարդուն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու հարցի դրական լուծում։ Ընդսմին, պահպանելով, ենթակայի ցանկությամբ պարագայում, նրա նախկին քաղաքացիությունը։ Միայն այդ միջոցով, երբ կապահովվի սփյուռքահայի սեփականատիրական իրավունքը, այդ թվում և հողի նկատմամբ, կսկսվի տնտեսական լիակատար ինտեգրացիայի գործընթացը։

4. Երկրաղաքացիության խնդիրը բուռն վեճեր է առաջացրել նույնիսկ Ազգային ժողովի մակարդակով։ Բոլոր նրանք, ովքեր դեմ են արտահայտվում, անհանգստություն են դրսևորում, թե Հայաստանը պիտի թալանվի,

Հողը պիտի ենթարկվի կենտրոնացման և համակենտրոնացման, գյուղացին՝ հողազրկվի։

Երկքաղաքացիություն, սովորաբար, արտոնում են այն երկրները, որոնցից այլևս ոչինչ դուրս տանելիք չկա, այլ, ընդհակառակն, կարող են միայն ներս բերել։ Մենք այսօր հենց այդ վիճակի մեջ ենք։ Հողը, այո՛, վաղ թե ուշ պիտի անցնի կենտրոնացման և համակենտրոնացման ճանապարհը։ Բայց կարելի է որոշակի օրենքներով համակարգել հողօգտագործման հարցերը, բարենպաստ պայմաններ ստեղծելով գյուղացու համար, որը այսօր ունի հող, բայց գերի է ընկել այդ մի բուռ հողին՝ առանց մեքենայի, պարարտացման, բուժման, բերքի ապահովագրված իրացման և այլն։

Սփյուռքում գտնվող շուրջ 5 միլիոն մեր հայրենակիցների գերակշռող մեծամասնությունը, վստահաբար, չի օգտվելու երկքաղաքացիության կարգավիճակից, որը ենթադրում է նաև որոշակի պարտականությունների կատարում։ Դա, սակայն, չի նշանակում, թե նրանք դադարում են հայ լինելուց։ Իսկ մենք ունե՞նք անհրաժեշտ օրենսդրական դաշտ, որպեսզի սփյուռքահայը Հայաստանում օրենքի առջև դանազանվեր որևէ ճապոնացուց կամ բրազիլացուց։ Դժբախտաբար չունենք։ Մինչև այսօր էլ սփյուռքահայը մեր օրենքի առջև հարազատ չէ, իսկ, երբ մեր իշխանությունները նրանց կոչեցին «օտար», վիրավորանքի խոր զգացում առաջացավ, որը տեղ գտավ նույնիսկ սփյուռքահայ մամուլում։

Սփյուռքահայի համար իր հայրենիքում որոշակի արտոնություններ նախատեսող օրենսդրական դաշտի ստեղծումը ինտեգրացիայի անհրաժեշտ պայմաններից մեկն է։

5. Հանրահայտ ճշմարտություն է, որ առանց հայ ժողովրդի այս վերջին հողակտորի՝ Հայաստանի Հանրապետության գոյության, գրեթե անմիջապես կգադարի գոյություն ունենալ Սփյուռքը, իբրև ազգային կեցության ձև։ Այս հանրահայտ դրույթից հետևում է ոչ այնքան հանրահայտ մի եզրակացություն, որ հրամայաբար անհրաժեշտ է Հայաստանի գոյության, ամրացման ու զարգացման պատասխանատվությունը բաժանել բոլոր հայերի վրա, անկախ նրանց բնակավայրից։ Նախորդ իշխանությունները, ձգտելով պահպանել կառավարման մենաշնորհները, սփյուռքահայությանը, փաստորեն, օտարել էին այդ պատասխանատվությունից։

Խնդիրը ընդգրկում է մի քանի ոլորտներ՝ տնտեսական, բարոյական, քաղաքական։ Տնտեսականի հարցը վերը շոշափած լինելով, պետք է ավելացնեմ Ազգային տուրքի գաղափարը։ Տարիներ շարունակ ծեծված այս հարցը, իր խեղաթյուրված արտահայտությունը գտավ «Հայաստան» հիմնադրամի ձևով, որը, փաստորեն, վեր է ածվել պետության երկրորդ բյուջեի, մի տարբերությամբ, որ պաշտոնական բյուջեն գեթ գտնվում է Ազգային ժողովի հսկողության տակ, իսկ այս երկրորդը՝ մի խումբ մարդկանց ենթակայական կամքի հրամանի ներքո։ Ազգային տուրքը պետք է հետապնդի համազգային նշանակության ամենակենսական խնդիրներ, ուրեմն և նրա իրականացման ասպարեզը ամբողջ հայությունն է, իմա՝ Հայաստանը, Արցախը, Սփյուռքը։ Այս պարագայում միայն կդառնա իրոք Ազգային տուրք, որը պետք է ունենա համազգային հակակշռի մեխանիզմ։

Բարոյական նորմերի տեղաշարժը, որ ընթանում է Հայաստանում, բավականին հիվանդագին արտացոլում է գտնում ազգային նկարագրի խաթարման երևույթներում։ Հայաստանում այժմ տեղի է ունենում սփյուռքացման երևույթ, այդ բառի բացասական իմաստով, որը հատուկ էր քսանական թվականներին, երբ արևմտյան հոռի բարքերը խուժում էին անպաշտպան գաղթական զանգվածների վրա։ Հայաստանն էլ այսօր արևմտականանում է, հատկապես ամերիկանանում՝ օտար լեզուներով ձայնագրություններից և ազդագրերից, որ հեղեղել են մեր փողոցները ու ցուցափեղկերը, մինչև մարմնավաճառություն։ Երբեմնի հոգևոր հարստության փոխարեն, որով հպարտանում էր սփյուռքահայը, այսօր մեզ դարպասում է կրթամշակութային ահավոր անկումը։ Ե՛վ կրթությունը, և՛ մշակույթը, և՛ գիտությունը դուրս են մնացել պե-

տության, ավելին՝ ամբողջ ազգի հոգատարությունից։ Ահա բնագավառներ, որոնք կերտում են մեր ազգի ապագան։ Եվ հենց այս բնագավառները պետք է նաև ունենա իր ուշադրության կենտրոնում Ազգային տուրքը։

Հայաստան—Սփյուռք ինտեգրացիայի բոլոր ուղղությունների ամբողջությունը և արդյունավետությունը ապահովել հնարավոր է միայն քաղաքական պատասխանատվության տարածումով բոլոր կողմերի վրա։ Իշխանությունները ձգտել են համոզել Սփյուռքին, թե Հայաստանի կառավարումը, նրա ներքին և արտաքին քաղաքականության իրականացումը Սփյուռքի գործը չէ. նա պիտի չխառնվի դրանց։ Եվ ահա մի պահ որդեգրվեց հակառուսականություն, դրան զուգահեռ Հայ Դատը մոռանալու, ցեղասպանության հիշատակումից խուսափելու քաղաքականություն։ Այսօր էլ զանազան քաղաքական ուղղություններ են ընտրվում, որոնք մշակվում են մի քանի ղեկավարների ուղեղում և գործադրվում ամբողջ ազգի անունից։

Կարելի է և պետք է մշակվեն մեխանիզմներ, որոնցով սփյուռքահայությունը, ի դեմս իր լիազոր ներկայացուցիչների, մասնակցի երկրի քաղաքականության սկզբունքային հարցերին, և համապատասխան քաղաքական պատասխանատվություն վերցնի իր ուսերին։ Վերը հիշատակածս միասնական մարմնի ստեղծման պարագայում։ դա, բնականաբար, կլինի այդ մարմնի մասնակցության որոշակի սահմանված ձև։ Այլ պարագայում կարելի կլիներ յուրաքանչյուր գաղթօջախից մեկական-երկուական ներկայացուցիչ ունենալ Հայաստանի Ազգային ժողովին առընթեր մի խորհրդակցական մարմնի մեջ, որը կունենար խորհրդատվական ձայնի իրավունք, և որը սահմանված ժամկետում կենթարկվեր ռոտացիայի։ Հնարավոր են, անշուշտ, ուրիշ տարբերակներ։ Խնդիրը այս հարցի դրական լուծման անհրաժեշտության գիտակցումն է։ Լուծման տարբերակ միշտ կգտնվի, եթե մենք իրոք լրջորեն շահագրգռված ենք «Մեկ ազգ՝ մեկ հայրենիք» կարգախոսին մարմին տալու մեջ։

6. Ռուս հայտնի դիվանագետ Անդ. Մանդելշտամը գրեց Ցարևանոի «Միացյալ և անկախ Թուրանիա» գրքի ռուսերեն թարգմանության առաջաբանը, որի մեջ ռուսական հասարակության անհանգստությունն էր հայտնում համաթուրքականության ծավալապաշտական ձգտումների առիթով։ Բնավ պիտի չզարմանալ, ուրեմն, որ հենց Մանդելշտամի առաջարկությամբ և նախաձեռնությամբ 1931 թվականին Փարիզում, Ազգային Պատվիրակության վերջին նախագահ Գաբրիել Նորատունկյանի տանը, թեյասեղանի շուրջ հավաքվեցին մի խումբ քաղաքական-հասարակական գործիչներ, այդ թվում Ալ. Խատիսյանը՝ Հայ Հեղափոխական Դաշնակցությունից, Արշակ Չոպանյանը՝ Ռամկավար Ազատական կուսակցությունից, Լևոն Բաշալյանը՝ Գաղթականաց հանձնաժողովից։ Ներկա էին, անշուշտ, նաև տանտերը ու հավաքի նախաձեռնողը։ Մանդելշտամը հարց դրեց. հայ ժողովուրդը ունի ազգային դատ, ուրեմն պարտավոր է ունենալ կենտրոնացված համազգային քարոզչական մարմին, որը ունակ պիտի լիներ համակարգելու և ուղղություն տալու տարբեր վայրերում զանազան քաղաքական ու հասարակական խմբավորումների ճիգերին։

Անցել է գրեթե յոթ տասնամյակ։ Այսօր շատ ավելի բազմազան են Հայ Դատի հետապնդման ճիգերը ոչխարհով մեկ, բայց շատ ավելի կազմակերպված ու լայն ճակատով է հանդես գալիս հակառակորդը, կենտրոնացված վիթխարի միջոցներ ներդնելով հակահայկական քարոզչության մեջ։ Մենք, սակայն, մինչև այսօր շարունակում ենք տարանջատ գործողությունների մարտավարությունը։

Անհրաժեշտ եմ համարում, որպեսզի մեր քաղաքական ուժերը քննարկեն համազգային քարոզչական մարմնի ստեղծման խնդիրը և փորձեն իրենց ջանքերի միավորումով հասնել այդ արդյունքին։ Դա նույնպես կլինի քաղաքական ինտեգրացիայի լավագույն դրսևորումներից մեկը։